

ամբած էր Վշակին անցեալ համարում, այլ և ստա-
տիկ վարարում է:

Եւ անկասկած, այդ վարարող հասանքը չուսով
կը լցնի Էջմիածինը և առաջնորդարանները հա-
րիրաւոր ազգէտ տիրացուներով, որոնցից մէկը
մի կեղծ համախոսական ձեռքին, միւսը մի աղա-
յի յանձնարարականով, երբորդը տիրացուա-
րանն էր վկայագիրը ծոցին, չորրորդը աւելի
«կտորուկ թուրը» բռնած.—կը ստանան փարաջայ,
և ապա խաչ, նոյն իսկ ծաղկեայ փիլոն, կամի-
լակաւ...

Ամեն օր մեր ձեռքը համարում են սոսկակի
փաստեր.—սկսած հիւսիսային կովկասից մինչև
Հին-Նախնական խաւար գիւղերը, սկսած Շիրա-
կից մինչև վիրախոս գիւղերը.—ամեն տեղից էլ,
մի ինչ որ քամուկ աղբեցութեան տակ, տղետ-
ները սիրտ առած, ողբերկած, պատրաստութիւն-
ներ են տեսնում:

Եւ այդ տղետները, գրեթե կարող անգամ չլինա-
ցողները, որ երբեմն մի կիտան, խոհարար,
դարբին էին, կասկածելի անցեալով և կասկածելի
բարոյականութեամբ, պէտք է «տողովրդի հովիւ»
դասանան և մասնն մեր խաւար գիւղերը լայն տա-
րածելու, «տողովորդ կրթելու», բարոյականու-
թեան բարորդի լինելու...

ԹՎԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Ինչպէս յայտնի է, Պետերբուրգի և Մոսկովայի
հայոց եկեղեցիներէ կալուածներէ կառավարութեան
և ծխական եկեղեցական պատրուկի հոգատարու-
թեան համար գոյութիւն ունեն տասն տարիներէ ի
վեր առանձին խօսք ու զինքն ունի, որոնց անգամ
ներքին ընտրում են ծխականները:

Այդ խորհուրդները հաստատելուց յետոյ, սկսելից
թէ կանոնաւոր հսկողութիւն եկեղեցական ստաց-
ածքներէ և հասոյթներէ վրա և թէ գիտակցա-
կան վերաբերմունք դէպի դուստրներէ գործա-
դրութիւնը: Այդ ժամանակից յետոյ կարելի եղաւ
եկեղեցիներէ և նրանց կալուածքներէ եկամուտ-
ներէ խնդիրները մանրամասն քննութեան նիւթ
դարձնել և նրանց դարձեալ ստուգելու, աւելացնելու
ծրագրները մշակել: Այդ ժամանակից իւրաքան-
չիւր ծխականի համար բացվեց մի առեան, մի
հաստատութիւն, ուր նա կարող էր ուղղել ծխա-
կան գործերէ բարեկարգութեան վերաբերեալ իր
ընթաց աւելի լայն կերպով և ամփոփում իր մէջ
զորքը և աւելի լրակատար կերպով և ձեռնարկով
այս կազմակերպութիւնը:

Սենե կարծում ենք, որ ծխական հոգաբարձու-
թեան կազմակերպութեան հիմնական օրէնքը այն
քան նպատակայարմար է և մեր պայմաններէ հա-
մար, որ պէտք է նրան աչքի առաջ ունենանք,
իրեն օրինակ և ուղեցոյց:

Այժմ ծխական-եկեղեցական հոգաբարձութեան

տական դպրոցներում, և «Вѣстникъ Воспитанія»
պատուական ամսագիրը այս շարժման գլուխն է
անցնել: Բայց ինչ կուրսեր պէտք է վարեն դեռ
առաջադեմ դաստիարակները և բժիշկները, որ
պէս զի այն, ինչ որ Անգլիայում վաղուց արդէն
կենտական պահանջ է դարձել, Ռուսաստանում
գեթ հասկացվի...

Բժ. Լագրանժը (Lagrange), իր կլասիկական
հեղինակութեան մէջ «Ֆիզիկական վարժութիւն»
ներէ առաջապահութիւնս վերաբարձով.—Ֆիզիկա-
կան վարժութիւնները երկուսն է բաժանում:

1. Արուեստական կամ գեղարվեստական վար-
ժութիւններն են: Եւ
վարժութիւնն են: Կան նաև այնպիսի մար-
զումներ, որոնք խառնուրդ են այս երկու ձևերի
Վազը, քաջը, լողը, բարձրացումը խաղերը բնա-
կան վարժութիւններ են, այն ինչ զինաստիկան
(մարմնամարզութիւնները պարաստների վրա)—
արուեստական են: Բօքսը, նաևը (гребня)—
խառնուրդ են երկու տեսակների: Արուեստա-
կան մարմնամարզութիւնը, ապարաստների վրա,
այսօր միանգամայն զուրկ է վերջովս ընտրել կա-
նոնաւոր դպրոցների միջից, զոնէ Եւրոպայում:

Նախ որովհետև այս վարժութիւնները պահան-
ջում են ուժի մեծ լարումն, որին ընդունակ են
միայն առողջները ու առանց այն էլ ամբակազմ-
ները, այսինքն դպրոցական մասնակներէ փոքրա-
մասնութիւնը, այն ինչ մեծ քանակութիւնով ա-
շակերտներ անընդունակ են լինում մասնակցել

հիմնելու միտքը բաւական առաջ է գնացել թիֆ-
լիսի թեմում: Թիֆլիսի առաջնորդարանում հրա-
ւիրված խորհրդակցական ժողովը ընտրել էր մի
յանձնատեղով, որը, մի քանի նիստեր անելուց յե-
տոյ, մշակել էր կազմակերպ հոգաբարձութեան ծրա-
գիրը: Այդ ծրագրի քննութեան համար մայիսի
7-ին, Թիֆլիսի առաջնորդի նախագահութեամբ,
գումարվել էր երկրորդ ժողով, բաղկացած 35
անձից, որը իր կողմից մի քանի կարևոր փոփո-
խութիւններ արաւ, մտնոցներով ծրագիրը եկեղե-
ցական հոգաբարձութեան վերաբերեալ ուսուց
հիմնական օրէնքներէ ոգ ուն և յօդուած ծ-
ն էր ին, որոնցով ծխական համայնքը անկախ
որոշող և կազմակերպող մարմին է:

Ծրագրի թէև բաւական մշակված է այժմ, բայց
և այնպէս նա կարօտ է վերջնական քննութեան և ու-
կան կէտեր, որոնց վերաբերութեամբ ցանկալի
են փոփոխութիւններ, կամ աւելի որոշ ձեռնարկ-
պոլութիւններ: Այդպէս է, օրինակ, ծխականներէ
մասնակցութեան վերաբերեալ յօդուածը: Թէև
ծրագիրը սկզբում ցուցակագրած բոլոր ծխական-
ներին տալիս է իրաւունք մասնակցելու ծխական
ժողովներին, բայց յետոյ այդ իրաւունքը սահմա-
նափակում է որոշ տուրքերի հաստատումով: Տուր-
քին վերաբերեալ կէտը աւելի լաւ կը լինէր բոլոր-
ովին չը մտնել և նրա մասին որ և է կարգադրու-
թիւն թողնել ծխական ժողովին:

Ռուսաց համապատասխան օրէնքի ողին թոյլ
է տալիս ժողովներին մասնակցել, և այն ունեն-
նաւու իր առուեստիկ ոչ միայն ծխականնե-
րին, այլ և բոլոր այն անձանց, որոնց մասնակ-
ցութիւնը կարևոր կը դառնէ ծխական ժողովը:

Նոյնպէս լաւ կը լինէր, որ այն դէպքերում, երբ
չեն հաստատվում հոգաբարձութիւններ, այլ գործե-
լը յանձնվում են մի անձի, որ դա լինէր միայն այն
պատճառով, որ անկարելի է բաղանջամ հոգա-
բարձութիւն հաստատել և յամենայն դէպս, այդ էլ
ծխական ժողովը ընտրութեամբ:

Վերջապէս չենք կարող չը նկատել և այն, որ
Աստրախանի եկեղեցական հոգաբարձութեան կա-
նոնադրութիւնը, որ հաստատված է սրանից 20
տարի առաջ, և որը բացէ հիմք ծառայէ և
ուրիշ թեմներ նոյնատեսակ հաստատութիւններ
համար, ունի այն առանձնայատկութիւնը, որ նա
յարմարեցրած լինելով միայն տեղական հանգա-
մանքներին, ունի ուրիշ տեղեր գործադրելու հա-
մար անյարմար կողմեր: Մինչդեռ հիմնական օ-
րէնքը աւելի լայն կերպով է ամփոփում իր մէջ
զորքը և աւելի լրակատար կերպով է ձեռնարկով
այս կազմակերպութիւնը:

Սենե կարծում ենք, որ ծխական հոգաբարձու-
թեան կազմակերպութեան հիմնական օրէնքը այն
քան նպատակայարմար է և մեր պայմաններէ հա-
մար, որ պէտք է նրան աչքի առաջ ունենանք,
իրեն օրինակ և ուղեցոյց:

այդ մարզութիւններին:

Երկրորդ, այն թոյլերը, որոնք իրական
պահանջ ունեն դէպի ֆիզիկական կրթութիւնը,
անկարող լինելով կատարել իրանց օյժից բարձր
վարժութիւններ, առեւտրութիւն և զրուանք են
զուրկ գեղի ֆիզիկական մարզումները առա-
սարակ:

Երբ որդէ քանի որ այս շարժումները մշտ
ուսուցչի հսկողութեան ներքոյ և նրա հրամանով
են կատարվում, այս իսկ պատճառով նրանք
ստիպողական են դառնում, ճշնելով մանկան
մկանունքների ազատ գործունէութիւնը, լարել
աւելի նրա ուշադրութիւնը և հետեւաբար փոխանակ
զուրկութիւն պատճառելու մասնակներին, նոր
յոգնածութիւն և ձանձրութիւն են առաջացնում:
«Վարմնամարզութիւնը պիտի զուարճալիք լինի,
իսկ նա առողջութիւն է պատճառում, զուար-
ձութեան փոխանակ. երկխալի համար նա մի
նոր ուսում է դառնում և այն էլ մի ոչ զիւրին
ուսում» (Լագրանժ):

Չորրորդ, երկնան կարճ րօպ է ներուժ
ստիպված է սպառել իր բոլոր ոյժը և
այնուհետեւ «հանգստանալ» —այսինքն կրկին ան-
շարժութեան մասնէլ իրան:

«Ինչ կասելիք, ասում է Լագրանժը, եթէ ձեզ
այս ձեի սնունդ առաջարկէին, այսինքն, մի քանի
օրվայ պաշար ձեզ մի անգամից կերցնէին, իսկ
այդ մի քանի օրերը քաղցած պահէին:
Հինգ բերրօր, անյարմարութիւնն այն է, որ ա-
րուեստական մարմնամարզութիւնը ապարաստների

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕՅՏԻՆ

Ստացանք Երևանի և Կարսի նահանգների և
գաղթական սովետների օգտին:

1) Սօսկվայից, պ. Յ. Թումանյանի միջոցով,
200 ռուբլի, որ հանգանակել են Մոսկովայի մի
խումբ երիտասարդ վաճառականներ:

2) Մեր վից, երեք պարոնների՝ Գէորգ Աւե-
տիսեանի, Գրիգոր Չերքեզեանի (երբորդը ազգա-
նունը չը կարողացանք կարդալ) միջոցով, 100
րուբլի, որից 50 ռուբլին մնացորդ է «Աւետիս»
մանդալուց հաւաքած փողից, իսկ 50 ռուբլին
մնացորդ՝ ներկայացուցից գոյացած դուստրի, որը
գտնվում էր պ. Գ. Չերքեզեանի մօտ:

3) Թիֆլիսից, մի խումբ հայ երիտասարդ-
ներից 7 ռուբլի:

4) Ղ. Վլադից, Հ. Մաժինեանի միջոցով, 20
րուբլի, որ հաւաքել են հայոց դպրոցի ուսուցիչ-
ները:

5) Թիֆլիսից, Սիմէոն Մաշկարանցի միջո-
ցով, ցինայցի օտարական ծառայողների մէջ
հանգանակված 13 ռուբլի 35 կոպէկ:
Ուրեմն նախկին 186 ռուբլի 52 կ. հետ այժմ
ունենք 526 ռուբլի 87 կոպէկ:
Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 4857 ռուբլի 72 կ.:
Ուղարկել ենք 4331 ռուբլի:

ՏԵՐԻՆԿԿՈՒԹԻՆՆԵՐ ԷՋՄԻԱՇՆԵՑ

Նորին կայսերական Բարձրութիւն թագաւոր-
անագ Յեսարվիլի նշանաբանութեան առիթով
վեհափառ կաթողիկոսը ուղարկել է այլիքի
19-ին Պետերբուրգ, ներքին գործերի մինիստրին,
հետեւալ հետազոտել:

«Այսօր բոլոր հողեղակայան դասի հետ մաղթանք
կատարելով Ն. Կ. Բ. Թագաւոր Ժառանգի ուրա-
խալի նշանաբանութեան առիթով և աղաչելով պը-
տակի երկնային Սահմանողից պարգեւը թագաւոր
Ժառանգի և բոլոր Օգոստոսիական Գերազատանին
երկարակյցութիւն և բարօրութիւն ի բարեբաղ-
դութիւն և ի փառս մեծի Ռուսիայի, լինելով
եւ Չեր Բ. Գերազանցութիւնից՝ պիտե՞ Ն. Ս.
Թագաւոր կայսեր Գահարքի առաջ Մեր ուրախու-
թեան և խորին փառաբանութեան զգացմունքը:
Թագաւորանագ Յեսարվիլի ծննդեան տարե-
դարձի առիթով վեհափառ ուղարկել է մայիսի
6-ին Պետերբուրգ, ներքին գործերի մինիստրին,
հետեւալ հետազոտել:

«Թագաւոր Ժառանգի ծննդեան մեծահանգստե
քնն Յերմայնթրմ աղօթքներ վեր ուղղելով, մաղ-
թանք կատարելով, թագաւոր կայսեր, թագուհու
և թագաւոր Ժառանգի առողջութեան, երկարա-
կյցութեան և բարեբաղդութեան համար, լընդ-
րում եւ Չեր Բարձր Գերազանցութիւնից՝ պիտե՞
Նորին կայսերական Մեծութեան Գահարքի առաջ

վրա, ինչպէս են՝ արապեցիւր, անշարժ ձո-
ղեք (Յարթ), օղեք, զոգա հեռու կան ձողեք,
սանդուղտներ, պարաններ և ուրիշ նե-
րը, զարգացնում են միմիայն թեկերի
մկանունքները, համարեան անշարժութեան
մասնելով ներքին մասերը, այսինքն մարմնի ամե-
նամեծ մասը: Չարագանց և աննպատակ զարգաց-
ման հասցնելով թեկերի մկանունքները ի վնաս
միւսների, այս ձեի մարզութիւնները շլացնում են
և սքանչացնում չը հասկացող զիտողին, որը թեկերի
մկանունքների հիւանդական հաստանալը առող-
ջութեան նշան է կարծում: Եթէ մէկը ուժեղ թեկեր
ունի, որոնցով կարող է մեծ ծանրութիւններ բարձ-
րացնել, ասում է Պօկրովսկին, այդ դեռ չէ նշա-
նակում, ասում է Պօկրովսկին, այդ դեռ չէ նշա-
նակում, ստամոքս, ուժեղ սիրտ և առողջ ուղեղ:
Առողջութիւն ստելով մենք պէտք է հասկանանք
բոլոր օրգանների համալսի զարգացումն և գոր-
ծունէութիւնը: Երբ այս համալսութիւնը բացա-
կայ է, առողջութիւնը կատարեալ չէ:

Թեկով արուեստական մարմնամարզութիւննե-
րի անյարմարութիւնները, ես կամենում եմ արանով
իսկ հասկանալի դարձնել, թէ ինչ պէտք է պա-
հանջի մանկական վարժութիւններին:

1) Վարժութիւնները երեք չը պէտք է ման-
կան ոյժերից բարձր լինեն, և երեք չը պէտք է հաս-
ցնեն նրան յոգնածութեան:

2) Պէտք է, որքան կարելի է, յաճախ կրկնվեն
նրանք, որպէս զի վրկեն մանկան՝ անշարժու-
թեան վնասակար հետեւանքներին:

իւ և իմ Հօտի անասանելի հաւատարմութեան
և անձնուիրութեան զգացմունքը:

«Արարատը» հաղորդում է, որ վեհափառ կա-
թողիկոսը, այրիլի 27-ին սուած մի կոնդակով,
կաղմել է մի մասնաւոր ուղի սովեայներին օգ-
նելու գործի համար, հետեւալ անձինքներինց,—
նախագահ՝ Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան,
անդամներ՝ Սահակ վարդապետ Այվատեան, Սահակ
վարդապետ Ամատունի, Ներսէս վարդապետ Հայ-
կազունի և Յուսիկ սարկաւազ:

«Արարատը» հաղորդում է, որ ի նպատ սօ-
վետների մինչև մայիսի 5-ը Էջմիածնում ստաց-
ված նուէրները գումարն է 16.945 ռ. 95 կ.,
100 պոպոց ցորեն և 302 զոյգ գոլկայ:

Էջմիածնից մեզ գրում են մայիսի 5-ից. «Ա-
հա մօտ 7 օր է, որ վեհափառը հիւանդ է կո-
կորդային բրօնխիտով և հազում է. այդ պատճա-
ռով յետաձգվեց Թիֆլիս գնալը անորոշ ժամա-
նակով: Մօտաւորապէս ամսիս վերջերը վեհա-
փառը ճանապարհ կընկնէ դէպի Բիւրական ամա-
րանոցը, որի համար և պատրաստութիւններ են
տեսնվում:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, մայիսի 12-ին

Վեհափառ Հայրապետն ազգիս ընկալաւ զեր-
կոսին գրութիւնս ձեր, որովք և յղեալ էիք յանուն
Նորին վեհափառութեան զգումարն 400 ռուբ-
լեաց, գտտացելն ի խմբագրութեան «Մշակ»
լրագրոյ, ի նպատ սովատանջ եղբարց մերոց:

Նորին ս. Օծուցիւնն սրտեանսն յօժարու-
թեամբ օրհնէ դձեզ և զամենայն նուիրատու և
յանձն առնէ զամենեւեանսդ ի խնամս ս. Հո-
գոյն:

Գլխանորդայր խորէն ծ. վարդ. Ստեփանէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 15-ին, պաշտօնական «Кавказъ» լրա-
գիրը իր յատուկ թղթակցից ստացել է հետեւալ
հեռագիրը Աբասթուանից. «Երէկ Բօթումում լու-
սավառութիւն կար: Այսօր, Նոյս կայսերական
Մեծութիւնները սրբազան թագաւորութեան տօնի
առիթով Բօթումի եկեղեցում մաղթանք կատար-
վեց, որին բարհանեցին ներկայ լինել Նորին
Մեծութիւն թագուհի կայսրուհին, Մեծ իշխանու-
հի կսէնիս Ալեքսանդրովնա, Մեծ իշխանները,
ավետան, վարժութիւնը և ժողովրդի անազնի բաղ-
մութիւն: Նախաճաշից յետոյ թագուհի կայսրու-
հին Մեծ իշխանուհի Կսէնիս Ալեքսանդրովնայի և
Մեծ իշխան Գէորդի Ալեքսանդրովիչի հետ միա-
սին բարհանեց ճանապարհ ընկնել, մէկ ժամ
և 20 բօպէին, Ախալցխա, ուր հասան երե-
կոյան չորս ժամին: Բարձրագոյն ճանապարհ-
հորիներին դիմաւորեցին զորքերը: Սուազել:

3) Վարժութիւններից այնպիսիներն են միայն
օգտակար աճող սերնդին, որոնք պահանջում են
մարմնի բոլոր մկանունքների գործունէութիւն և
ոչ թէ միայն թեկերը, ինչպէս այդ լինում է ար-
ւեստական մարզութիւններէ մէջ ապարաստների
վրա:

4) Նրանք պէտք է հեշտ հասկանալի լինեն ման-
կան և չը պահանջեն նրանից մտքի մեծ լարումն:

5) Պէտք է զուարճալի լինեն, որպէս զի երե-
խան սիրով վերաբերվի նրանց և ոչ թէ մի նոր
ստիպողական դաս սահմանի իր համար:

6) Վարժութիւններից ամենայարմարները նը-
րանք են, որոնք կատարվում են խմբովին, երզով,
գոտայով, և այլն:

Մեր ծանօթութիւնը մանկան մարմնակազմու-
թեան (ոսկորների, մկանունքների, թոքերի, ստի
և այլն) և նրա հոգեբանութեան ուսումնասիրու-
թեան հետ, այսօր իրաւունք է տալիս մեզ, բժիշկ-
ներին, միանգամայն դատապարտել մարմնամար-
զութիւնները անշարժ ապարաստների վրա, և
վարժութիւնները այս ձեղ զուրս վճարել աճող
սերնդի ֆիզիկական կրթութեան պրօգրամից,
այսինքն աշխատել իրազօրծել այն, ինչ որ մի
զար առաջ արդէն մտցրած է Անգլիայում, որտեղ
անյայտ են ինկվիզիցիայի այս նոր գործընկերը
որոնք այնպիսի մեծ տեղ բռնեցին մասնակներէ
ֆիզիկական դաստիարակութեան մէջ բարձրագ-
կրթված Գերմանիայում և սրան ընդօրինակող
ուրիշ երկրներում:

(Կը շարունակվի)

ժամանակ երաժշտական խումբը կատարեց ժողովրդական օրհներգը: Քաղաքագլուխը բարձր ուղերջ աղ ու հայ մատուցանել արժանի մատուցարանով հանրապետական կայանում էին իրանց դրոշակներով: Լավում էր անվերջանալի «ուրա»: Երեկոյան 6 ժամին բարենաճեցին հասնել Արասթուման, ուր Նրանց դիմաբերեցին՝ Օլտոֆիելի Գուրչին և ուրիշ գեներալները: Մուտքի ժամանակ ու հայ, իսկ ծովազնայնները՝ ծաղիկների փնջեր: Շնորհիվ էին յաղթական կամարներ, փողոցները զարդարված էին ծաղկաթելերով, դրոշակներով և լուսաբերված էին: Մանառանդ գեղեցիկ էր լուսավառութիւնը շրջապատող լուսների վրա և պալատում: Պալատի առաջ տեղի ունեցած հրավառութիւն: Ամբարնոցներից շատերը զարդարված էին տրանսպարանտներով: Եղանակը լաւ է:»

Լուսմ ենք, որ Երբուրմի մէջ կազմված է մի փոքրիկ մասնաժողով, սովետներին օգնելու համար:

«Բէյտէրի» գործակալութիւնը Կ. Պոլսից հեռագրում է մայիսի 11-ից հետևեալը. «Վալաթիայի նշանաւոր հայ Միսն-բէյ Մազաթուրի վրա փողոցում երեք հայեր յարձակվեցին և ծանր կերպով վիրաւորեցին՝ ատրճանակ արձակելով նրա վրա և խանչալի հարուածներ հասցնելով նրան: Յարձակվողներից երկուսը կայանաւորված են: Յանցանքի չարտարիք նրանք համարում են այն հանցանքը, որ Մազաթուր դատաւանդ է հայկական դորին՝ անդադար դիվաններ անելով կառավարութեանը, ի վնաս հայկական իրաւունքների:»

Լուսմ ենք, որ ցնղի ձեռք բերել ցանկացողների թիւը արդէն հասել է 150-ի: Դրանց մեծ մասը ցանկութիւն են յայտնել պատրաստվել թիֆլիսում, իսկ մի փոքր մասը գաւառում, իրանց պաշտօնավայրերում:

Մեզ հաղորդում են, որ Շիրակի ցանքերը առայժմ լաւ դրութեան մէջ են. ամեն տեղ հացահատիկները կանոնաւոր կանայել են: Թեև մի քանի տեղեր արտերը մնացել են առանց ցանելու, բայց եթէ հունիսը անոշ լինի, կարող է շատ թեթեւացնել անցեալ տարվայ սովից առաջացած ծանր վիճակը:

Ճողովրդական լուսաւորութեան միջնադպրոցական մէջ, որպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիչները, զեմատվոններից մէկի նախաձեռնութեամբ, հարց է յարուցված, որպէս զի իրաւունք տրվի զեմատվոնի այնպիսի զգրոցներ հիմնել, ուր ուսուցիչները և նրանց օգնականները կարողանան լինել և այնպիսի անձինք, որոնք չունեն ուսուցչական իրաւունք:

Պաշտօնական կազմակերպութեան «Արարատ» ամսագրի մէջ, լուսաւորված ասացողները վերնա, գրի տակ, տպագրված է հետևեալ փողոցային ասացուածը. «Ով որ ճանապարհի վերայ իրեն ետեմէն հանջող ամէն մէկ շ... կկայնէ քար առնել զարնելու, նա իւր տեղը չի հասնէր: Հրախիւրում ենք ձեռնափառ կաթողիկոսի ուշադրութիւնը «Արարատի» այդ անվայել գրական վարմունքը վրա: Այդպիսի փողոցային ասացուածներ սազ են գաւառի միայն թիֆլիսի փողոցային թերթերին, և ոչ թէ «Արարատին»:»

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ, Թիւրքիայի Սիվաս և Երզրումի վրայէջները յայտարարված են իբրև վտանգաւոր՝ խօսերայի կողմից:

Էջմիածնում, մինչև այժմ, յօգուտ սովետների ստացված փողերի գումարը հասնում է 30,000 ռուբլու:

Ներքալթի, ամսիս 17-ին, Գիւղարանտեսական ընկերութեան ժողովում պ. Ա. Բալանթարը կարգադրեց մի գեկուցում «Տեղեկանք գիւղարանտեսական օրգաններին» մասին: Ճողովակները շատ ծանրակշիռ գտնելով գեկուցման մէջ չօշափված խնդիրները՝ ցանկութիւն յայտնեցին, որ գեկուցումը արագավի, որից յետոյ կարելի կը լինի ենթարկել նրան մանրամասն քննութեան:

Մենք արդէն հաղորդեցինք, որ Երևանում ևս բացված է տիրացու արհեստի կատարելագործութեան համար: Այժմ մեզ հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ այդ տիրացուներից 21-ը պէտք է շուտով ձեռնադրվեն: Սակայն նրանց ձեռնադրութիւնը պէտք է կատարվի ոչ թէ Երևանում, ժողովրդի աչքերի առաջ, ինչպէս առաջ էր ենթադրվում, այլ հեռու, առանձին տեղ, Սևանի վանքում: Այդ տիրացուները շուտով պէտք է ճանապարհ ընկնեն Սևան, ուր և տեղի կունենայ ձեռնադրութիւնը:

Լօնդոնի Բիբլիական ընկերութիւնը մի արագա-տիպ մամուլ է ընծայել Էջմիածնի տպարանին: Մամուլը ամենալաւ տեսակից է:

Կովկասեան Բարեգործական ընկերութեան Նոր-Բայազէտի ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ սպել հետևեալը. «Վարչութիւնս ստանալով յարգելի խմբագրութիւնից արդիւն 30-ի գրութեանը ևս 100 ռուբլի, յայտնում է իր խորին շնորհակալութիւնը և խնդրում է սպաղբել ի լուր հասարակութեան. 1) Արատաֆայից, պ. Ալեքսանդր Մամիկոնեանցի միջոցով հանգանակված և մեզ հասցրած է 19 քաակ ալիւր՝ այն է, Մ. Բոչարեանից 5 քաակ, Յ. Գալթեանից 6 քաակ, Ս. Աւետիսեանից 3 քաակ, եղբ. Մեսրոպեանեանցից 3 քաակ, և Ա. Մամիկոնեանից 2 քաակ, ընդամենը 19 քաակ, ամեն մի քաակը 5 պուդ, բոլորը 95 պուդ. 2) Օղեսայի համալսարանի ուսանողների Գեորգ Բուրուժանցի, Աստուածատրեանցի և Բէկլիկեանցի միջոցով հանգանակված և պ. Խաչատուր Բուրուժանցի միջոցով մեզ հասցրած է 168 ռուբլի: Վարչութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը թէ նուիրատու և թէ հանգանակող պարոններին:»

Չանգեզուրից մեզ հաղորդում են, որ վերջին ժամանակներս բաւական թիւով տղէտ և անուս տիրացուներ են ճանապարհ ընկնում Երևան, քահանայ ձեռնադրվելու համար:

Պետական խորհրդի բարձրագոյն հաստատված կարծիքով, հարկային տեսուչներ են նշանակվում Դարդասանի և Կարի նահանգներում և Բաթումի, Սուխումի, Արդաբիլի և Չաքաթայի շրջաններում:

Յօգուտ Գրքերի Արժուէրն աւճանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Օղեսայից, Յակովբ Յակովբեանի միջոցով հանգանակված 32 ռուբլի. նուիրատուներն են՝ Յ. Սուխանեանց 5 ռ., Մ. Մուրադեանց 5 ռ., որդիք Բ. Արզումանեանց 5 ռ., Ա. Արքայանեանց 3 ռ., Ռ. Գրիգորեանց 3 ռ., Ս. Օղեսեանց 2 ռ., Մ. Կարաբեանց 2 ռ., Կ. Մէլքե-Բեկարեանց 2 ռ., Յ. Յակովբեանց 2 ռ., Ա. Սառաջեանց 1 ռ., Ի. Դուրդեանց 1 ռ., եղբ. Կոյժմանեանց 1 ռուբլի. 2) Կարսից, Աբէլ Ապրէսեանից 29 ռուբլի, հետևեալ նամակով «Ողբարեւելով 29 ռուբլի, որ աւելացել է ինձ մօտ 1892 թ.ին հանգուցեալ Արժուէր գաղաղի վրա Բաթումի հայ հասարակութեան կողմից զրկված պատկի փողից, խնդրում եմ յատկացնէք նրան մեծանուն հրապարակախօսի արձանին և գրքերի տպագրութեան: Մանրամասն հաշիւը ուղարկել եմ Բաթում, պ. Առաքել Սարուխանեանին և պ. Արշակ Մատուրեանին: Ռեւիմ նախկին 3231 ռուբլի 28 կ. հետ այժմ ունենք 3292 ռ. 28 կոպէկ:»

Ֆինանսների մինիստրի կարգադրութեամբ, յարբուժի գրաւած այն պարանջները, որ մարտատները ծախել են աճուրդով և գնուելը մաքսատնից իսկոյն չեն վերցրել՝ հաշիւները վերջացնելուց յետոյ, պէտք է, «Торгово-Пром. Газета» լրագրի խօսքերով, պահեստային տուրքի ենթարկվեն՝ նրանց ծախելու օրից, օտար, բերովի ապրանքների նման:

Պետերբուրգի լրագրիչները հաղորդում են, որ կալուածական բանկերը չիմել են ֆինանսների մինիստրութեանը՝ խնդրելով, որ մինիստրութիւնը միջոցներ ձեռք առնէ այն փոխառուների գործողութիւնների դէմ, որոնք զանազան հարկերով պակասեցնում են կալուածների գները: Օրինակ, մտադրութիւն կայ մի կանոն սահմանել, որով այն պայմանագրիները, որոնց մասին կարուածա-

տերերը չեն յայտնել բանկին՝ փող փոխ առնելու ժամանակ և կապել են առանց բանկի համաձայնութեան, փող ստանալուց յետոյ, պէտք է լինելով լուծել այդ հարցը, ամեն կերպ աշխատում է յետաձգել պատրիարքի հրաժարականը:

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան կարի տեղական ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ «Մշակի» մէջ հրատարակել հետևեալը. «Ապրիլ ամսի ընթացքում վարչութիւնս, ի նըպաստ սովետների, ստացել է հետևեալ նուէրները. Թիֆլիսի վաճառական Ե. Մ. Յակովբեանից 50 պուդ ցորեն, այստեղի Սաղաթիէլ քահանայ Տէր-Գալթեանից՝ ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնուհի 50 ռուբլի, եղբ. Ս. և Ա. Յովսէփեաններից՝ իրանց հանգուցեալ Անդրէաս եղբոր կտակի համաձայն՝ 25 ռուբլի, ձրի ճաշարանին, Վարաթի-Լիստոյից, Ա. Արզումանեանից, 10 ռուբլի, այստեղի բժիշկ Ն. Կոլոլուկոյց՝ 5 ռուբլի և «Тифлисский Листокъ» լրագրի խմբագրութիւնից՝ 10 ռուբլի, ընդամենը 105 ռուբլի՝ փողով և 50 պուդ ցորեն, որի համար վարչութիւնս ճանապարհածախս է վճարել 20 ռ. 60 կ.: Վարչութիւնս հրապարակով յայտնելով իր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ մեծարդոյ նուիրատուներին և «Тифлис. Листокъ»-ի խմբագրութեան, պարտք է համարում աւելացնել, որ նոյն ամսի ընթացքում բաժանել է Կարի շրջանի՝ Խառ-Չիֆուլի, Խալիսանի, Գոթախուլի, Ղանիգեղ և Բրուտ-Սօղիւտի գիւղերի կարօտեալներին 165 1/2 պուդ ալիւր, 136 1/2 պուդ ցորեն և 50 պուդ գարի, և դարձեալ շարունակում է բաժանել:

ԲԱՎՈՒՅՑ մեզ գրում են. «Մայիսի 8-ին՝ Բագուի երկսեռ զգրոցներին համար ընտրված հոգաբարձուների մասին հաղորդած լուրը լիակատար չէր: Ընտրված են՝ տղայոց զգրոցի համար՝ պ. պ. Բժ. Մ. Չալան և բժ. Ե. Աղամիրջեան, անձեռնադրուներ՝ Ա. Կաճկաճեան և Գ. Տէր-Մարգարեան: Օրիորդաց զգրոցի համար՝ պ. պ. Ն. Աբէլեան և Ար. Կրասիլնիկեան, անձեռնադրուներ՝ Ն. Գալթեան և Ա. Վաչան: Միջոցեան զգրոցի համար՝ Գր. Գալանթար և անձեռնադրուներ՝ Ա. Նազարեան: Դրանք բոլորն էլ կրթված, ինտելիգենտ երիտասարդներ են և մենք համոզված ենք, որ հասարակութեան յոյսերը կարգաւորեն:»

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՇԸԳԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Բ. Գուրը ներկայումս շատ նեղ դրութեան մէջ է գտնվում այն պատճառով, ասում է մայրաքաղաքի «НОВОСТИ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, որ հայոց պատրիարք Ալեքեան անպատճառ կամարում է իր պաշտօնը թողնել: Պատրիարքն ասում է, որ ինքն չէ ցանկանում սպանված լինել: Երեք անգամ ինքն բարդի բերմամբ ազատվել է մահից, և այսօր հետև այլ ևս չէ կամարում իր կենսաբան վտանգի ենթարկել, մասնաւոր որ ինքն իր դրութիւնը անտանելի է համարում այն պատճառով, որ պատրիարքարանի խառն ժողովը անկանոն է կազմված:

Եթէ Բ. Գուրը կընդունի պատրիարքի հրաժարականը, որի վրա նա պնդում է, այն ժամանակ, նրա յաջորդին ընտրելու համար՝ նա ստիպված կը լինի ազգային ժողով գումարել, որովհետև միայն ազգային ժողովը իրաւունք ունի պատրիարք ընտրել և սպա իր ընտրութիւնը սուլթանի հաստատութեանն առաջարկել: Սակայն կառավարութիւնը հենց ազգային ժողով գումարելու դէմ է, վախենալով անկարգութիւններից, և այդ պատճառով անհամար կարակի մէջ է և չը գիտէ թէ որպիսի վճիռ կայացնէ:

Սակայն շատերը կարծում են, որ կառավարութեան երկիւղ անհիմն է և ազգային ժողովը, որը կազմված է հայոց բարձր հոգեւորականութիւնից և պատուաւոր անձինքներից, չէ կարող անկարգութիւններ առաջացնել, մասնաւոր եթէ զգուշութեան անհրաժեշտ միջոցներ ձեռք առն-

վեն՝ նրանց առաջն առնելու համար: Սակայն օստիկանութեան միջխարը այլ կերպ է կարծում, և թիւրքաց կառավարութիւնը անկարող լինելով լուծել այդ հարցը, ամեն կերպ աշխատում է յետաձգել պատրիարքի հրաժարականը:

ՄԵՐԲԻԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅՈՒՄԸ

Այն օրից, երբ Սերբիայի այժմեան պատանի թագաւորի հայրը, Միլանը, վերադարձաւ իր որդու մօտ և սերբիական քաղաքացու իրաւունքներն ստացաւ, այն օրից, ասում ենք, Սերբիայում կատարվում են անցքեր, որոնք Եւրոպայի ուշադրութիւնն են գրաւում: Ներկայումս եւրոպական մամուլը նուիրում է ամբողջ երեսներ սերբիական վերջին անցքերին:

«Berliner Tageblatt» լրագրի Բէլգրադի թղթակիցը հաղորդում է. «Սահմանադրութիւնը վերացված է: Իսկոյն հրատարակվեց թագաւորական հրամանը, որի մէջ ասված է հետևեալը. «Իմ ամենամեծ զինուորական ղեկավարութիւնները հանդիպում էին միայն անյաղթելի խոչնդոտներին: Իմ ժողովրդի օգնութեամբ ես կաշխատեմ փոփոխել գործերի այդ դրութիւնը և երբ կրթեր կը խաղաղութիւն և կը հաստատվի խաղաղութիւնս ու կարգը, անք ձեռք կը զարկենք նոր սահմանադրութեան մշակմանը: Իսկ ներկայ րոպէին ես վճռեցի վերացնել 1888 թ.ի սահմանադրութիւնը՝ իր բոլոր մանրամասնութիւններով, և ժամանակաւորապէս վերադառնալ 1869 թ.ի նախկին սահմանադրութեանը:»

Սերբիական պաշտօնական շրջաններում այն համոզումներ կայ, որ սահմանադրութեան վերացման պատճառը ոչ թէ թագաւորական ընտանիքի դէմ եղած զուարթութիւնն է, այլ արմատական ներքի վարժուածք, որնք մեծամասնութիւն ունենալով սկուզչինայում, սպառնում էին հարկեր չը վճարել:

«Daily News» լրագրի Բէլգրադի թղթակիցը հաղորդում է, որ սերբիական նոր յեղափոխութեան պատճառը նախկին Միլան թագաւորն է, որը անձնական վրէժ ունի արմատականները, ղէմ: Միլանը արմատականներին իր անձնական թշնամիներ է համարում և կամենում է թագաւորին, իր որդուն, կուսակցութիւնների ճանկից ազատել: Սակայն անկախված է, որ արմատականները անաղին մեծամասնութիւն ունեն թէ սկուզչինայում և թէ ժողովրդի մէջ: Այդ բանը գիտնալով, Միլանը վճռեց ազատել 1889 թ.ի սահմանադրութիւնից, որի ժամանակ իւրաքանչիւր նոր ընտրութիւնները անպատճառ մեծամասնութիւն կը ապին արմատականներին: Իսկ կարծեցեալ դատարանի թագաւորական տան դէմ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի առիթ՝ կարանաւորելու արմատականներին և վերացնելու սահմանադրութիւնը:

ՆԱՄՍԿ ԹԻՌԻՔԻՍՏԻՑ

Կ. Պոլսի, 10 մայիսի

Սիւնն պէլ Մազաթուր այսօր ծանրապէս վիրաւորուեցաւ. վիճակը դէժ է:

Ճամբ առտուան 10 էր, Սիւնն պէլ իր գրասենակը կուգար, Վալաթիոյ կողմը. սանդուղներէ վեր ելելով՝ նրանցքէ մը պիտի անցնէր սենեակ երթալու համար. երկու զաւառացի հոն կայնած իր կանցնէր, գաւառացիներէն մէկը բըլովէր մը քաշելով կողին դաւա և զարկաւ. վիրաւորածը ստակալի աղաղակներ արձակեց. անմիջապէս օգնութեան հասան. արիւնուայ առին տարին սենակը. սպանողները չը փախան, կեցան տեղերին, բռնուեցան. մէկուն քովը բըլովէր կար, մէկու զանակ: Առաջին քննութեան պատասխանեցին թէ՛ վիճակը իրենց ելած էր, պարտքերին կատարեցին:

Երկուքն ալ փոխադրուեցան օստիկանութեան դուռը:

Ոստիկանութեան նախարարը անմիջապէս եկաւ հիւանդին քով. սուլթանը քանի մը թիկնապահներ զրկեց հարցնելու:

Եղած ազդեցութիւնը աննկարագրելի է. ընդհանուր իրարանցում կայ. անուրի տպաւորութիւն ամեն աղբերու մէջ:

Պատրիարքը սարսափահար է. հիւանդը իր ընկարանը տարին Օրթագեղ. վիճակը շատ ծանր: Սպասողական վիճակի մէջ ենք. տեսնեք ինչ

հետևանքներ կունենայ տարածված սարսափը հայ էֆենդիներուն վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՌՆԵՐ

Ֆրանսիական միջխտրութեան նախագահ կազմիր-Պերիէ վերջնականապէս հրատարական տուեց: Ապագայ միջխտրների թուով անուանում են Լորնէին և Բուրբոնը:

Քէլզրադից հեռագրում են. «Յէնդուրան վերականգնված է: Երկու լրագիրներ երկէ դադարեցրին իրանց գոյութիւնը: Լրագիրներից մէկին գրում են. «Գործերը կառավարում է անպատասխանատու կառավարութիւնը և այդ պատճառով քննարկատիւներ անհարկն է: Յոյսը խտտացված նոր սահմանադրութեան վրա է:»

«Wiener Allg. Zeit.» լրագիրը դաւադրութեան ամբողջ պատմութիւնը Միւնխի գործ է համարում, որը կամենում էր ազատվել սահմանադրութիւնից, որը փուշ էր նրա աչքում: Իսկ դաւադրութեան մասին տարածել է լուր, որպէս զի կարողանայ բանտ նստեցնել սահմանադրութեանը հաւատարիմ մի քանի մարդկանց: Առհասարակ, նախկին խաղն սկսվեց: Շատ կարելի է, որ Միւնխը կը ստիպի իր որդուն դա՛նից հրատարակել և ինչն երկրորդ անգամ կը պատկել տայ իրան արքայական թագով:»

ՄՇԱԿԻ ՀԵՌՆԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԳՐՆԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

ՎԻԷՆԱ, 17 մայիս: Պատգամաւորների ժողովը երկրորդ անգամ յանձնաժողովը հաւանութիւն տուեց այսօր աւտոր-ուսական առևտրական դաշնագրին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիս: Այս օրերս պետական խորհրդի ընդհանուր ժողովում կը ընկնէ անցագրային նոր կանոնադրութեան մի քանի նախագծերը և բանկային հիմնարկութիւններին վերաբերեալ մի քանի կանոնների փոփոխութիւնները:

ԲԵՂԳՐԱՎ, 17 մայիս: Հրատարակված է թագաւորական հրաման, որով ի նկատի առնելով երկրին սպառնող մեծ վտանգները, դադարեցնվում է զատաւտանական ընդհանրի գործունէութիւնը, կարգը խանգարելու վերաբերութեամբ, և նրանց պաշտօնը յանձնվում է ոստիկանութեանը: Պոէֆէկտուրայի համար վերականգնվում է 1839 թվի կազմակերպութիւնը:

ՊԱՐԻՅ, 17 մայիս: Գրպիւրի պաշտօնապէս ընդունեց նոր միջխտրութիւնը կազմակերպելու առաջարկութիւնը: Պատանկարէ համաձայնվում է ֆինանսների միջխտր լինել:

ՎԻԷՆԱ, 18 մայիս: «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ պայքը մի կողմից է զբրոււմ, որի մէջ խտոււմ է կաթոլիկ եկեղեցին ուղղափառ եկեղեցու հետ միացնելու հարաւորութեան մասին:

ԲԵՂԳՐԱՎ, 18 մայիս: «Koeln. Zeit.» լրագիրը Սոֆիայից մի լուր է հաղորդում, որ Ստամբուլում միջխտրութիւնը հրատարական տուեց և որ հրատարականը ընդունեց պրինց Ֆերդինանդը, որը յանձնեց Գրէկովին նոր միջխտրութիւն կազմակերպել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Table with exchange rates and prices for various goods in St. Petersburg. Columns include item names, quantities, and prices in rubles and kopecks.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ (կուկիա, վարձուցով արձանի հանդէպ)

- List of musical instruments for sale, including pianos and organs, with prices and descriptions.

Ս. Գ. ԳՈՐԿՈՎՈՎ 6-7 ժ. Սիմֆոնիկ և մէզի ու սեռական օրգանների հ. Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ 7-7 1/2 ժ. Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ 7-7 1/2 ժ. ախանջի, կոկորդի և քիթ ու նետարդային հ. երկուշարթի, չորեքշարթի և ուրբայի:

ԱՍԵՆԱՑԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

Advertisement for musical instruments featuring an illustration of a piano and text describing the shop's offerings.

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Advertisement for a bookshop listing various titles, authors, and prices.

Advertisement for a music school or conservatory, listing teachers and subjects.

Էջմիածնի Հայոց Սինդիկատների մէջ նշանակված է աճուրդ վարձով տարու համար ամենատեսակ հասցիներ երկրի բերքի սոյն ամի Աթուռին պատկանեալ գիւղերի, այն է՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻ—25 և 27 մայիսի սոյն ամի, ՕՇԱԿԱՆԻ և ՄՕՂՆՈՑ—6 և 8 յունիսի, ԵՂՈՒԱՐԿԻ և ՄԱՍՏԱՐՈՒ—13 և 15 նոյն ամսոյ, ԲՋՆԻՈՑ—20 և 22 նոյն ամսոյ: Անդամ կոնսիտորիայի՝ Գարբիէլ քահ. Տէր-Գարբիէլեանց (№ 56) 1-4

Large advertisement for 'PUSHKIN' (ՐՕՍՍԻԱ) featuring a portrait of Pushkin and detailed text about the publication's history and subscription information.

Advertisement for a book or publication, listing titles and prices.

Advertisement for a book or publication, listing titles and prices.